


6354
5984

ԼԵՕՆ-ԳԷՆԻ

ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Է ԿԵԱՆՔԸ

Փոխադրեց
Նիկողայոս քհ. Բունակեան



Նոր-Նախիջևան
ՏՊԱՐԱՆ Ս. Ե. ԱԽԱԴԵԱՆԻ.

|||
1911

Нахичевань на Дону
Типография С. Я. АВАКОВА.

9806

ԼԵՕՆ-ԴԵՆԻ

ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Է ԿԵԱՆՔԸ

9806

Փոխադրեց
Նիկողայոս քհ. Բոսնակեան



Նոր-Նախիջևան
ՏՊԱՐԱՆ Ս. Յ. ԱԻՆԳԵԱՆԻ.

Нахичевань на Дону
Типография С. Я. АВАКОВА.

1911

ԵԶՄ. ԳԵՏ. ՄԱՏԵՆԱԴ. ԴԱՆ
ՆՎԵՐ
N

Իւր թանկագին աներորդի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՏԷՐ-ՓԱՆՈՍԵԱՆԻ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

նուիրում է

ԹԱՐԳՄԱՆԻԶԸ.



Յովհաննէս Տէր-Յովսէփեան Տէր-Փանոսեան
(1868 թ. մարտ 5—† 1911 թ. ապրիլ 20)

Մի քանի խօսք տակնորոշ անհատներին.

Ո՛վ իմ եղբայրներ ու քոյրեր, ձեզ եմ նուիրում այս աշխատութիւնս, ձեզ, որ կեանքի ծանրութեան տակ կորացել էք, աշխարհային հոգսերից ու դաժան կռուից մաշուել ու ճնշուել էք: Ես այս էջերը գրել եմ աշխարհի մէջ թշուառութիւն, վիշտ և վիրաւորանք կրողներին համար: Ես ինձ բախտաւոր կը համարէի, եթէ դուք այստեղ գրտնէիք մի քանի օգտակար տեղեկութիւններ, մի քիչ էլ լուսաւորութիւն՝ ձեր ճանապարհի համար: Ուրեմն թող այս իմ համեստ աշխատութիւնս լինի ձեր ախրած ու տանջուած հոգու համար նոյնը, ինչ որ զովարար ստուերը արեգակից այրուող մշակի համար, և կամ անպտուղ անապատում բացուող թարմ ու վճիռ աղբերակը յողնած ճանապարհորդի համար:

I.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ամեն անգամ, երբ մարդ կհանջի խաղաղ լուսններին
կենտրոնացնում է իւր մտքերը, նա անկասկած հարց է տա-
լիս ինքն իրեն, թէ ինչ է կհանքը և ինչ է նրա ու տիեզերքի
զոյութեան նպատակն ու իմաստը: Կայ արդեօք մեզանից
մէկը, որ փորձած չլինի իմանալ, թէ ինչ է թագնուած
մահուան խորհրդաւոր վարագոյրի տակ, գիտենայ իր ճա-
կատագիրը, և այն՝ թէ Աստուած կեղծի՞ք է, թէ իրական-
աւելի:

Դրականապէս կարող եմ ասել, որ ամեն մի մարդ,
որքան էլ նա անհոգ և անխոյժ լինի, այնուամենայնիւ այս
մեծագոյն հարցերն անկասկած շօշափած կը լինի: Այս
խնդիրներն լուծման դժուարութիւնը, բազմաթիւ տեսու-
թիւններէ ծագած տարաձայնութիւնները, անմխիթար հե-
տադատութիւնները, որոնք մեծ մասամբ բղխում են ընդու-
նուած սխառնանքից, շփոթեցին մարդկային միտքը և վերջ
ի վերջոյ տարան ու հասցրին նրան անտարբերութեան ու
երկբայութեան: Բայց չէ՞ որ մարդ կարողութիւն ունի
ճանաչելու թէ ճշմարտութիւնը և թէ դուրս գալու խաւա-
րից դէպի բարեւար լոյսը: Այս բանի համար անհրաժեշտ է,
որ նա կենտրոնանայ ինքն իւր մէջ և լսէ այն ներքին
ձայնին, որ խօսում է ամենքի մէջ, և որին սովորաբար ին-
ներն անկարող են խաբել: Այդ՝ բանականութեան ու խեղճի
ձայնն է:

Մարդուս համար ամենակարեւոր բանն է իմանալ, թէ
ինչ է նա, որտեղից է գալիս, ուր է գնում և ինչ է նրա ճա-
կատագիրը: Այն գաղափարները, որ մենք կազմել ենք տիե-

զերքի և նրա օրէնքների մասին և նոյնպէս այն դերի մասին, որ մեղանից իւրաքանչիւրը պիտի խաղայ այս ընդարձակ կեանքի ստպարիդում, մեզ համար ունի մեծ նշանակութիւն: Այդ գաղափարներովն է, որ մենք առաջնորդուում ենք և դրանց համեմատ էլ որոշում կեանքի համար մի որևէ յայտնի նպատակ և գնում ենք այդ նպատակին հասնելու, ահա սա է քաղաքակրթութեան իսկական շարժող ոյժի հիմունքը. մարդուս որոշողն այն գաղափարն է, որով նա առաջնորդուում է: Ինչպէս հասարակութեան, այնպէս էլ իւրաքանչիւր անհատի համար աշխարհը ճանաչելու ու կեանքը հասկանալու ընդունակութիւնը միևնոյնն է. նա որոշում է այն ճանապարհը, որով մենք պէտք է գնանք, և այն վճիռները, որ մենք պիտի ընդունենք: Բայց ինչպէս որ մենք արդէն ասել էինք, այս խնդիրների լուծումը դժուարին է. դրա համար յաճախ հարկադրւում ենք բոլորովին մի կողմ ձգել դրանց, մեծամասնութեան կարծիքները և կենթադրութիւնները շատ պարզ չեն, չափազանց տատանւում են, և դրանով կարելի է միևնոյն ժամանակ իմանալ մարդկանց բնաւորութիւնն ու գործունէութիւնը:

Ահա թէ որտեղ են այն գլխաւոր չարիքի և այն մտաւոր աղմուկի պատճառները, որոնք այնքան շատ են մեր օրերում: Ամեն մարդ բնականաբար ձգտում է յառաջագիմութեան, ամեն ոք ցանկանում է գնալ առաջ: Բայց ո՞ւր գնալ: Ահա այս մասին շատ քիչ են մտածում: Իր նշանակութիւնը չիմացող ու չհասկացող մարդը նման է այն ճանապարհորդին, որը մեքենայաբար գնում է որևէ յայտնի ճանապարհով, չիմանալով թէ որտեղից է դուրս եկել և ո՞ւր հասել, և թէ ինչ է ճանապարհորդութեան նպատակը. հարկաւ այդպիսի մարդը ամենափոքրիկ արգելքների պատահելիս կանգ է առնում և այդպիսով անյոյս կորցնում է իր ժամանակը, ամենևին չի էլ մտածում որ և է նպատակի մասին:

Փիլիսոփայական տարրեր սխտեմները պատճառ դարձան մարդկանց ընկնել նիւթակրօնութեան մէջ. նրանց կարծիքով ամեն ինչ վերջանում է մահով, և մարդս նշանակուած է ոչ այլ ինչի համար, բայց եթէ ոչնչանալու:

Ամեն ինչ նիւթ է: Տիեզերքի ամեն մի մասնիկն ունի իր անբաժնալի յատկութիւնը, և նրա շնորհիւ կազմակերպուած է տիեզերքն իր բոլոր գոյացութիւններով. նիւթն ինքն իրեն է կառավարւում արտաքոյ կեանքի մեքենայական օրէնքների միջոցով, միայն նա է յաւիտենական, իսկ մենք ստեղծուած ենք հողից, հող էլ պիտի դառնանք: Այն բանը, որ մենք սովորաբար անուանում ենք հողի, այսինքն՝ մեր մտաւոր յատկութիւնների բաղադրութիւնը, մեր գիտակցութիւնը,—նիւթականների կարծիքով ոչ այլ ինչ է, բայց եթէ մարդկային կազմուածքի ֆունկցիա, որը մարդու մեռնելուց յետոյ գոլորշիանում է: Ես յետոյ ցոյց կը տամ, թէ որքան այդպիսի հայեացքը հակառակ է փորձի և բանականութեան. միայն այսքանը կ'ասեմ, որ այդ հայեացքը դժուարացնում է թէ արդարադատութիւնը և թէ յառաջագիմութիւնը ճանաչել: Եթէ մարդկային կեանքի շրջանը ծնունդով ու մեռնելով է սահմանափակւում, եթէ անմահութեան հեռանկարը մեր գոյութիւնը չի լուսաւորում և նրան ուղղութիւն չի տալիս, այն ժամանակ մարդս չէ կարող ունենալ ուրիշ օրէնքներ, բացի իր բնագոյններից, քմահաճոյքից և դուարձութիւնից:

Տիեզերքի և կեանքի վրայ մեքենայական գաղափար ունենալը բոլորովին ոչնչացնում է ազատութիւնը, հասկացողութիւնը, հետեւաբար և պատասխանատուութիւնը: Այդպիսիները գոյութեան կռիւը դարձնում են անողոք կոյր օրէնք, որի շնորհիւ թոյլերն ընկնում են ուժեղների հաւուածներից, և նրանք այդպիսով աշխատում են իսպառ հեռացնել երկրի վրայից սիրոյ, համերաշխութեան և մարդկային հղբայրութեան վսեմ գաղափարները: Անկասկած նիւթակրօնների և անասութեանների մէջ էլ լինում են ազնիւ և առաքինի մարդիկ, բայց այդ նրանց քարոզած ուսմունքի ու գաղափարների հետեանքն ու արդիւնքը չեն:

Այն մարդը, որ խորապէս համոզուած է, թէ մահով վերջանում է ամենայն ինչ, և բացի մարդկային արդարադատութիւններից ուրիշ բան չի ընդունում, ես այդպիսի մարդկանց հարց կը տայի, թէ ուրեմն ինչո՞ւ համար է կռիւն ու տանջանքը, ի՞նչ արժէք ունի ուրեմն արիւթութիւնը,

կարեկցութիւնը և ճշմարտութիւնը, վերջապէս ի՞նչ հարկ կայ մեր ցանկութիւններին, կրքերին և մեր բոլոր ձգտումներին դէմ կենալ, եթէ մարդս անկախ արարած է, եթէ տիեզերքի մէջ չկայ Գերագոյն Դատաւոր, Որը չպէտք է դատէ մարդկային վարմունքն ու գործերը, չպէտք է առաջնորդէ և պաշապանէ նրան. էլ ի՞նչ ուրեմն կարելի է սպասել մարդկութիւնից: Հանդերձեալ կեանքի ժխտումը ոչ միայն մի շարք չարիքներ է առաջ բերում, այլ և բոլորովին ոչնչացնում է ամեն տեսակ բարոյական սկզբունք: Ուրեմն ոչ թշուառների համար վարձատրութիւն կայ և ոչ վշտացեալների համար յոյս և մխիթարութիւն: Եստիկան և ամբարշտ մարդն էլ անպատիժ է մնալու, հետեաբար մահից յետոյ ամենքի ճակատագիրն էլ միեւնոյնն է: Բարի ու չար, արդար ու մեղաւոր մարդիկ իսպառ պիտի ոչնչանան ու մոռացուին: Եթէ տիեզերքի մէջ չկայ ոչ բանականութեան օրէնք, ոչ ճշմարտութիւն, ոչ սէր, այլ միայն կոյր ոյժ, և այդ ոյժի գոյացութիւնն էլ պատահականութեան են վերադրում,—այն ժամանակ գազափարը, բարոյական գեղեցկութիւնը, բարութիւնը ոչ այլ ինչ են, բայց եթէ ցնորք և խաբէութիւն: Հետեաբար մարդկային կեանքի նպատակը զուարճութիւնների մէջ պէտք է սրսնել և ոչ թէ առաքինութիւնների: Այս այսպէս լինելուց յետոյ՝ կեանքը մարդու համար մի զգուհիլի բան է դառնում, իսկ ինքնասպանութիւնն ամենալաւ միջոցն է այդպիսի աննպատակ կեանքից ազատուելու: Սրա հետեանքն այն է լինում, որ թըշուառներին բաժին է ընկնում ատել բախտաւորներին և կատաղութեան ըօպէլին ջարդ ու փշուր անել կեղծ քաղաքակրթութիւնը: Դարձեալ կրկնում եմ, եթէ մենք հաւատում ենք, որ մեր կեանքն ապագայ չունի և մահն էլ ամեն բանի վերջ պիտի դնէ, այն ժամանակ ամեն ինչ մի կողմ պիտի ձգենք և միմիայն մեր անձնական շահի համար պիտի մտածենք ու հոգ տանենք: Մեր ինչի՞ն է հարկաւոր ապագան, քանի որ նրա մասին ստոյգ բան չգիտենք: Ինչո՞ւ համար ուրեմն խօսենք յառաջագիմութեան, բարեփոխութեան, անձնուրացութեան մասին: Եթէ ապագան մեզ համար առօրեայ գոյութեան տեսիլ է, այն ժամանակ մեզ

մնում է օգտուել ներկայով, շտապել խել կեանքից բոլոր զուարճութիւններն ու հաճոյքները, փախուստ տալ ամեն տանջանքներից և ընտանեկան սուրբ պարտականութիւններից: Մարդու ամենամեծ և ամենամաքուր զգացմունքը հաւատն է, որը կարող է լինել միայն մարդկային հոգու խորքում, և այդ զգացմունքն է, որ ազատում է մեզ: Եթէ ի նկատի ունենայինք ընդհանուրի բարիքը, այն ժամանակ բաւական էր որ մեզանից իւրաքանչիւրն իմանար ու հասկանար, որ մեր մէջ նախագծուած ճշմարտութիւնը տիեզերքի օրէնքն է, որը կառավարում է բոլոր արարածներին, և որի միջոցով բարին վերջնականապէս պիտի յաղթանակէ չարին և կեանքն էլ՝ մահուան:

II.

ՀՈԳԻ ԵՒ ՆԻՒԹ.

Ամեն մի գործողութիւն երբէք առաջ չի գալիս առանց պատճառի, և ոչ մի բան՝ ոչնչից. դա ակսիոմա է, անհերքելի ճշմարտութիւն: Բայց որովհետեւ մենք մեզանում եղած այդպիսի ոյժերի և ընդունակութիւնների գոյութիւնը չենք կարող ապացուցել իրիւ նիւթի արգիւնք, այն ժամանակ նրանց պատճառները լուսարանելու համար անհրաժեշտ է դիմել մի այլ աղբիւրի, այսինքն այն սկզբունքին, որին մենք անուանում ենք հոգի: Երբ մենք իջնենք մեր հոգու խորքերը, աշխատենք ուսումնասիրել մեզ ու մանրամասն զննենք մեր ընդունակութիւնները, այն ժամանակ մենք երես առ երես կանգնած կը լինենք բարձր սկզբունքների, այսինքն՝ սիրոյ, բարութեան և արդարութեան տուփ, որոնց բացակայութեան դէպքում մարդկութիւնը կւրցնում է իւր մեծութիւնն ու նշանակութիւնը: Այս սկզբունքները, որոնց մենք գտնում ենք թէ՛ տգէտ, և թէ՛ հանճարեղ մարդկանց մէջ, անկարելի է որ առաջ գան նիւթից, որը զուրկ է այդպիսի յատկանիշներից, այսինքն՝ բանականութիւնից

ու զգացմունքից: Մրանից կարելի է եղբակացնել այն, որ նա անկարող է սահղծել բանական էակներ: Մեր յիշողութիւնը, մեր գիտութիւնը, գեղեցիկ ու ճշմարտի զգացմունքը, հիացմունքն ու խոնարհութիւնը, որ մենք զգում ենք մեր վեհանձն վարմունքների միջոցին,— այս ամենը չեն կարող առաջ գալ այն սկզբունքից, որից առաջ է գալիս մեր զարկերակի արիւնը և մեր մարմնի բաղադրութիւնը:

Սկեպտիկները իզուր պնդում են, թէ ամենայն ինչ նիւթ է: Բայց չէ՞ որ մենք սիրում ենք առաքինութիւն, անձնուիրութիւն, հերոսութիւն. չէ՞ որ մենք զգում ենք, սիրում ենք, տանջւում, ունենք խիղճ, կամք, բանականութիւն: Ուրեմն ինչպէ՞ս կարող է այս ամենը առաջ գալ անգիտակցական և անմիտ սկզբունքից և կոյր պատահականութիւնից: Հետեւաբար՝ մենք շատ բարձր ենք կանգնած մեր գիտակցութեամբ ու իմացական կարողութեամբ նիւթակրօնների ընդունած սկզբունքից:

Նմանօրինակ վճիռ կայացնելը տրամաբանական օրէնքների հակառակ է. անկարելի է լինէր ընդունել, որ մի որեւէ իրի մասնիկը գերազանցէր ամբողջին, բանական էակը առաջ գար անբան սկզբունքից, և աննպատակ պատճառներից երևան գային այնպիսի գոյութիւններ, որոնք ընդունակ լինէին հետեւելու զանազան նպատակներին:

Բնութագրութիւնը ուսուցանում է մեզ, որ մարդկային մարմնի զանազան մասնիկները վերանորոգւում են յայտնի ու որոշ ժամանակամիջոցում, և այս օրէնքների համեմատ մեր մարմինը բաղմիցս քայքայւում ու նորոգւում է իւր կեանքի ընթացքում: Չնայելով այսպիսի փոփոխութիւններին, որոնց շարունակ ենթարկւում է մեր օրգանիզմը, մենք այնուամենայնիւ մնում ենք նոյնը:

Գալով մեր ուղեղի նիւթին՝ պէտք է ասենք, որ նա էլ իր կարգին անընդհատ ենթակուած է փոփոխութիւնների, բայց մեր միտքը նոյնն է, նմանապէս մեր անցեալ կեանքի յիշողութիւնները:

Եւ այսպէս մարդս երկու բնութեան յատկութիւններ ունի. նա իր մարմնով ու զգայարանքներով առաջ է գալիս

նիւթից, իսկ մտաւոր ու բարոյական ընդունակութիւններով՝ հոգուց. ուստի մարդու բանականութիւնը, խելքը, գաղափարութիւնը, կամքը կարող չեն խառնուել միմեկին արեան և կամ մկանունքների հետ:

Այդպէս և մեր գիտակցութիւնը գլխաւորապէս տրուած է մեզ, որ մենք կարողանանք չափել ու կշռել մեր վարմունքները, ճանաչել ու զանազանել բարին ու չարը:

Մենք տեսնում ենք, որ շատ անգամ մեր մէջ հոգեկան և մարմնական յատկութիւնների ներքին կռիւ է մղւում: Եթէ մենք բաղկացած լինէինք միմիայն նիւթից, այն ժամանակ մեզ համար զգալի չէր լինի այդ կռիւը, և մենք կը շարունակէինք մեր կեանքը առանց ցաւելու, խղճահարուելու, բաւականութիւն տալով մեր մարմնաւոր բնագոյններին:

III.

ՏԻԵԶԵՐՔԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Եթէ ընդունում ենք, որ մեր մէջ կայ բանական և մտաւոր սկզբունքի, պատճառների և գործողութիւնների օրէնք, որոնք լուսաբանում են նրա ծագումը, անկասկած պարտական ենք բարձրանալ մինչև այն սկզբնական աղբիւրը, որ տեղից նա հոսում է: Մարդիկ իրենց աղքատիկ լիզուով այս աղբիւրը անուանում են Աստուած:

Նա է կենտրոնը, որտեղ միանում են տիեզերքի բոլոր ոյժերը. գլխաւոր կէտը, որից տարածւում է արդարութեան, համերաշխութեան ու սիրոյ գաղափարը, ահա սա է ընդհանուր նպատակը, որին ձգտում ու դիմում են բոլոր արարածները, թէ՛ գիտակցաբար և թէ՛ անգիտակցաբար:

Տիեզերքի մեծ ճարտարապետի հետ ունեցած յարեթութիւններից արտաբոլորում է ընդհանուր ներգաշնակութիւն, համերաշխութիւն ու եղբայրութիւն: Միմեանց հետ

հղբայրների լինելու համար հարկաւոր է ունենալ հասարակաց հայր, և այդ հայրն է Աստուած: Նրա մեծութիւնն ու ստեղծագործութիւնը ուսումնասիրելու համար պէտք է որ խաղաղ ու պարզ գիշերներին, երբ ամեն ինչ հանգիստ ու լուռ է, մեր հայեացքը ուղղենք գէպի սնստհման երկինք և ուշի ուշով գիտենք աստղերի կանոնաւոր ընթացքը անհուն տարածութեան մէջ: Այս անթիւ ու անհամար շողշողուն կէտերը մի-մի վիթխարի աշխարհներ են, որոնց հետ համեմատելով՝ մեր երկիրը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի չնչին հիւլէ:

Ահագին տարածութիւններով բաժանուած ենք նրանցից, այդ պատճառով էլ նորա մեր աչքին երևում են փոքրիկ լուսաւոր կէտեր. բայց երբ ուղղենք գիտութեան հակայական աչքը—հեռագիտակը, այն ժամանակ մենք կը տեսնենք ու կը զանազանենք նրանց մակերևոյթի վրայ մեծամեծ հրային ովկիանոսներ: Կը տեսնենք նոյնպէս մեր երկրին աւելի մօտ գտնուող աշխարհների վրայ ծովեր, գետեր, ջրանցքներ, լեռներ, հովիտներ և ամպերի շարժողութիւն: Այն ժամանակ դրականապէս կարելի է ասել, որ կեանքը տիրում է ամենայն տեղ, և տիեզերքի մէջ եղած հրաշալի կարգաւորութիւնը, անսահման տարածութեան մէջ թաւալուող մեր երկիրը և նրա հարեան մոլորակներն ընդհանուր օրէնքների են ենթարկւում: Եւ այդ աշխարհները, որոնք լի են բանական էակներով,—շարունակ մօտենում են ու հեռանում զանազան արագութեամբ և կատարելով իրենց կանոնաւոր ընթացքը՝ ցոյց են տալիս, որ ամենայն տեղ կայ մշտական շարժում, գործունէութիւն ու կեանք:

Իսկ լաւ նայիր մեր երկրին, նա մեր մայրն է, որը կարծես ասում է մեզ—Ձեր մարմինը իմն է, դուք իմ զաւակներն էք: Նայիր նրան, որը մարդկութեան բարերարութիւնն ու կերակրիչն է: Նայիր դու նրա եզերագծերի, ցամաքների ու ձկների ներդաշնակութեանը, որոնց մէջ ծնունդ ու աճել են ազգեր, գոյացել են նրա ընդարձակ ու մշտաշարժ ովկիանոսները:

Հսկիր տարուայ եղանակների հերթով միմեանց հետեւելուն, որոնք երբեմն պատում են նրան կանաչ բոյսե-

լով, ոսկեայ մարդագետիւններով և երբեմն էլ սպիրտով ծածկոյթով, նայիր բոյսերին ու կենդանի արարածներին, որոնք նրա վերայ բնակւում են. թռչունները, միջատներն ու ծաղիկները և բոլոր առարկաները կատարելագործման հրաշալիքն ու աստուածային ստեղծագործութեան ազամանն են:

Լաւ նայիր այժմ ինքդ քեզ, քո զգայարանների զարմանալի խաղին ու նրանց հրաշալի ու բարդ օրգանիզմին: Մարդկային զգայարաններն արդեօք կարող է նմանել այս հիւսալի գլուխ գործոցներին: Ուրեմն այս բոլոր իրերը լաւ ղննիր և հարցրու քո բանականութեան, կարող են արդեօք այսքան գեղեցիկութիւնները, փայլերն ու ներդաշնակութիւնները պատահականութեան արդիւնք լինել. չպէտք է արդեօք խոստովանել, որ այդ բանական պատճառի արդիւնքն է, որով և կառավարւում է տիեզերքի կանոնաւորութիւնն ու կեանքի զարգացումը: Իսկ եթէ դու ինձ մատնացոյց ես անում նրա հետ միասին այն թշուառութիւնները, սասանմունքներն ու զարհուրելի անցքերը, որոնք խախտում են այս հրաշալի կանոնաւորութիւնը, ես այն ժամանակ կը պատասխանեմ քեզ—Քննիր բնութեան երևոյթները. միայն աշխատիր, որ հարեանցի կերպով չլինի այդ, այլ ընդհակառակը՝ թափանցիր իրերի խորքը, այն ժամանակ դու զարմանքով կը տեսնես, որ այդ հակասութիւն ցոյց տուող երևոյթները հաստատում են մի-միայն ընդհանուր ներդաշնակութիւնը, և որ նրանք մինչև անգամ անհրաժեշտ են արարածների յառաջագիմութեան, այսինքն՝ կեանքի բարձրագոյն նպատակի համար:

Յայտնի նիւթակրօնները առարկւում են՝ — Եթէ Աստուած ստեղծել է աշխարհը, ի՞նչ է ստեղծել Աստուած: Այս առարկութիւնը անհիմն է ու անիմաստ: Աստուած արարած չէ և արարածների կարգին էլ չի կարելի դնել նրան: Նա ընդհանուր էակ է և անսահման է ժամանակի ու տարածութեան մէջ, հետևաբար անվախճան է ու յաւիտենական: Չկայ մի արարած, որ նրան հաւասար կամ նրանից բարձր լինի: Ամեն մի կեանքի աղբիւրն ու սկիզբն Աստուած է: Նա անհատական ոյժերը կապում ու ներդաշնակում է, որոնք առանց Նրան կ'առանձնանային ու կը ցրուէին: Եւ եթէ այդ ոյժերը իրանք իրանց միայն և բարձրագոյն կամքի օրէնք-

ներին էլ չհեթարկուէին, այն ժամանակ նրանք տիեզերքի մէջ շփոթութիւն ու խառնակութիւն առաջ կը բերէին:

Ընդհանուր ծրագրի ու նպատակի գոյութիւնը, որտեղ տիեզերքի բոլոր ոյժերը մասնակցում են, ապացուցում է Գերսպոյն էակի գոյութիւնը, որն է՝ Աստուած:

IV.

ԿԵԱՆՔԻ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Մենք ասել էինք, որ մարդս իւր ապագան լուսաւորելու ու պարզաբանելու համար ամենից առաջ պարտական է ինքն իրեն ուսումնասիրել: Վստահ քայլերով ման գալ ցանկացողը պէտք է իմանայ, թէ ո՞ր է դնում: Այն ժամանակ միայն մարդս կարող է իր և սոցիալական միջավայրի բարւոքման համար աշխատել, եթէ նա իւր վարմունքները բարձրագոյն օրէնքների հետ համակերպել կարողանայ: Այն օրը, երբ մարդս իւր գերի կարեւորութիւնն ու վեհութիւնն իմանայ, այն ժամանակ նրա համար հեշտ կը լինի հնա-նալ այն ամենից, որ նրան փոքրացնում ու ստորացնում է. նա այն ժամանակ կարող կը լինի իւր բանականութեան պահանջների համեմատ կառավարել ինքն իրան և իւր ջանքերով նախապատրաստել մարդկանց օգտուէտ միացմամբ, դարձնելով նրանց մի մեծ եղբայրական ընտանիք:

Բայց ինչպէս դեռ հեռու է այդ օրը մեզանից:

Թէև մարդկութիւնը միացած է և առաջ է շարժւում յառաջագիտութեան ճանապարհով, սակայն կարելի է ասել, որ նրա անդամների մեծամասնութիւնը, չճանաչելով իրանք իրանց և չհասկանալով գոյութեան ներկայ նպատակը, անգիտակցաբար մթութեան մէջ են թափառում: Դրա համար էլ խորին մթութիւնը սքօղում է մտրդկային բանականութիւնը: Զշմարտութեան ճառագայթները թէև նրանց հասնում են, բայց բոլորովին գունատուած և թուլացած, այնպէս որ նրանք անկարող են նրա գալարուն ուղիները լու-

սաւորել այնքան, որպէսզի նրանց աչքի առջև հեռաւոր զաղափարական նպատակը սլարդ երևայ: Մարդ չիմանալով իւր ճակատագիրը և ընկնելով անդադար սխալանքների մէջ, յաճախ անիծում է կեանքը: Մարդս իւր ծանր բեռան տակ ճնշուելով, իւր գլխի եկած փորձանքների ու թշուառութիւնների պատճառը շատ անգամ իւր մեծաւորների վրայ է ձգում: Այն մարդը, որը Աստուածանից խռոված է և Որին նա իւր անխելքութեամբ ու յուսահատութեամբ մեղադրում է անարդարութեան մէջ, այդպիսին յաճախ փախուստ տալով, բոլորովին հեռանում է բարերար կռուից, որը մի-միայն կարող էր նրա հոգին ամբապնդել: Այդ ինչիցն է ուրեմն: Ինչո՞ւ համար ուրեմն մարդս ոտք է դնում այդ կռուի մեծ ասպարէզը, քանի որ ինքը այդպէս թոյլ ու անզէն է, որտեղ անընդհատ և առանց հանգստութեան կատարւում է անվերջ ու հսկայական պայքար:

Որովհետև երկրագունդը միւս աշխարհների սանդուխ-քի ամենաստորին աստիճանն է, ուստի այստեղ կենում են միայն մանուկ հոգիները, այսինքն՝ այն հոգիները, որոնց դեռ երկար ժամանակ չէ, ինչ շնորհուած է բանա-կանութիւն: Մեր աշխարհի մէջ դեռ ևս նիւթն է իշխում: Նա իւր լծի տակ մեզ ընկճում է, մեր ընդունակութիւն-ները սահմանափակում է, մեր՝ դէպի բարին ու դէպի իղէպլը ունեցած բուռն ձգտումներին արգելք է հանդիսա-ում: Մարդս, որպէսզի կարողանայ ճանաչել ու որոշել կեանքի պատճառներն ու բարձրագոյն օրէնքը, որոնք կառավա-րում են հոգիներն ու աշխարհները, — հէնց դրա համար պէտք է որ ազատուի այդ ծանր ազդեցութիւններից, նիւթական պաշտամունքից և այն բոլոր անցողական ու փո-փոխական իրերից, որոնք կապում-կաշկանդում են մեր միտքը և մթագնում մեր բանականութիւնը:

Մենք այն ժամանակ միայն կը տեսնենք ճշմարտու-թիւնը, երբ մտքով վերանանք ու դուրս գանք լոյս աշ-խարհ. այն ժամանակ կը մոռացուէր մեր երկրաւոր գոյու-թեան տեղի, ժամանակի, մանրամասնութիւնների, շա-հաղրդութիւնների և բոլոր մանր մունր բաների ազդե-ցութիւնը:

Կամքի ոյժով մենք առժամանակ կը թողնենք երկիրը և մտքով կը վերանանք դէպի այն հրաշագեղ բարձրութիւնները: Այն ժամանակ այդ բարձրութիւններէից մեր առաջ կը բացուին անթիւ դարերի բնութիւն լայն տեսարանները և տարածութեան անսահմանութիւնները: Կատաղի կռուի ժամանակ ինքն իրան կորցրած զինուորը իւր շուրջը տեսնում է միայն շփոթութիւն ու խառնակութիւն, այնինչ՝ զօրապետը իւր հայեացքով հասու է լինում պատերազմի ընթացքի վերայ և ըստ այնմ առաջնորդում է նրանց ու նախատեսում այդ կռուի հետեանքը: Երբ մի ճանապարհորդ մոլորուելով ընկնում է ձորերի և այլ ու այլ խորտուբորդ տեղերի մէջ և այն տեղից մի կերպ դուրս գալով բարձրանում է լեռու, ահա այն ժամանակ նա կարող է պարզ տեսնել բոլոր վայրերը այնպէս, ինչպէս մի մեծ մակարդակի վերայ: Հէնց այդպէս էլ մարդկային հոգին այդ բարձրութիւնների զագաթից և հեռու երկրաւոր խոռոչներից կը գտնէ համաշխարհային ներդաշնակութիւնը: Այն, ինչ որ երկրի վրայ նրան թւում էր հակասական, անբացատրելի, աշխարհային ու անարդարացի,—այդ ամենը վերէից լայն կերպով բացւում ու լուսաւորւում է. գալարուն ճանապարհները հարթւում են. ամեն ինչ պարզաբանւում ու միանում: Եւ կուրացած բանականութեան առաջ բացւում է վեհագոյն կանոնաւորութիւնը, որը կառավարում է աշխարհների ու արարածների ընթացքը: Այս լուսաւոր բարձրութիւններից այլևս չէր երևար մեզ, որ կեանքը անցողական սնամոռութիւնների ու զուարճութիւնների վայր է, այլ բանական կատարելագործման միակ միջոց՝ դպրոցն է, որ սովորեցնում է հեղութիւն, համբերութիւն և պարտք: Եւ այս կեանքը ապագայ ճշմարիտ կեանքի նախադուռն է. նա չի կարող կղզիացած մնալ: Եւ կեանքի սահմաններից դուրս, այսինքն մեր ծնուելուց առաջ ու մահից յետոյ մենք տեսնում ենք, կարծես, իբրև ստուերի մէջ, բազմաթիւ գոյութիւններ, որոնց ուսումնասիրութեան համար մեր կրած աշխատանքի ու չարչարանքի շնորհիւ, մենք կարողացանք սակաւ առ սակաւ, քայլ առ քայլ նուաճել այն գիտութիւնների փոքրիկ քանակութիւնը, որ մենք ունենք և

որոնց միջոցաւ մենք կարող ենք ձեռք բերել այն, ինչ որ մեզ պակասում է, այսինքն՝ կատարելալ բանականութիւն, անթերի ու ճշմարիտ գիտութիւն և բոլոր մեզ շրջապատողների նկատմամբ էլ անսահման սէր: Անմահութիւնը, իբր անվերջ շղթայ, անսահման ժամանակների մէջ բացւում է մեզանից իւրաքանչիւրի առաջ: Ինչպէս որ ամեն մի գոյացութիւն կազմում է իբրև առանձին օղակ, որը միանում է առջևից և յետևից ուրիշ օղակի հետ, այնպէս էլ այս կեանքը համերաշխ է ուրիշ տարբեր կեանքերի հետ: Ապագան անցեալի հետեանքն է: Ամեն մի գոյացութիւն աստիճանաբար դաստիարակւում ու աճում է: Մարդկային հոգին, որ ազատ և պատասխանատու է և իւր սեփական ճակատագրի լաւ կամ վատ լինելու սկզբնապատճառն է,—իւր համար ինքն է ճանապարհ ընտրում. և եթէ այդ ճանապարհը վատ է, որտեղ նա անկաման պիտի կնթարկուի, և որտեղ կան քարեր ու փշեր, որոնք պիտի վիրաւորեն ու պիտի խեղդեն նրան, այդ բաների օգուտը գտնէ այն կը լինի, որ նրա փորձառութիւնը կը զարգանայ և կ'ամրապնդէ բանականութեան գոյութիւնը:

V.

ԿԵԱՆՔԻ ԲԱՐՁՐԱԴՈՅՆ ՆՊԱՏԱԿԸ.

Որովհետև մարդու համար կեանքի նպատակը մտաւոր ու բարոյական կատարելագործման մէջն է կայանում, դրա համար ուրեմն ի՞նչպիսի պայմաններ և ի՞նչպիսի միջավայր առաւել պիտանի կարող է լինել այդ նպատակին հասնելուն: Մարդս կարող է այս կատարելագործման վերայ աշխատել ամեն պայմաններում և ամեն տեսակ սոցիալական միջավայրում, սակայն որոշ պայմաններում այդ աշխատանքը կտրուկ է առաւել օգտուէտ լինել: Հարստութիւնը մարդու տալիս է լայն միջոց կրթութիւն ձեռք բերելու. նա տալիս է նրան կարողութիւն՝ իւր միտքը առաւել կամ

սակաւ զարգացնելու համար. նա տալիս է նրա ձեռքը արձակ միջոց, օգտակար հաստատութիւններ հիմնելու, որոնք կարող են ծառայել իւր անբախտ եղբայրների վիճակը բարելաւելու: Բայց աւանդ, այդպիսի մարդիկ շատ քիչ են պատահում, որոնք պարտք են համարում աշխատել իրանց խեղճ եղբոր աղքատութիւնը թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս թիթեւացնելու: Հարստութիւնը շատ անգամ մարդու սիրտը քարացնում է: Նա հանգցնում է այն ներքի կրակը, այն յառաջադիմութեան ու սոցիալական բարեփոխման սէրը, որը ամեն մի ազնիւ հոգի տաքացնում է. նա ուժեղներին ու թոյլերին մէջ տեղը կանգնեցնում է պատնէշ. նա հարկադրում է ապրել այնպիսի շրջաններում, որտեղ չեն կարող մտնել այս աշխարհի թշուառները, և որտեղ հետևաբար սէրը չի կարող հասնել և բարոքել այս վերջինների հոգսերն ու տառապանքները: Աղքատութիւնն էլ նոյնպէս ունի իւր սարսափելի վտանգաւոր կողմերը, ինչպէս են՝ բնաւորութիւնների ստորացումը, յուսահատութիւնը և ինքնասպանութիւնը: Բայց այն ժամանակ երբ հարստութիւնը մեղ անտարբեր ու անձնասէր է դարձնում, աղքատութիւնը, ընդհակառակը, մօտեցնում է թոյլերին և հարկադրում է մեղ մասնակից ընկեր լինել նրանց տրտմութեան: Ուրիշների չարչարանքն ու տառապանքը դնահատելու համար ինքդ չարչարանք ու տառապանք կրած պէտք է լինի: Մինչդեռ հարուստները պատուի բարձրութեանը նախանձելով՝ միմեանց հետ մրցում են, այնինչ՝ կարիքը աղքատներին ստիպում է մօտենալ իրարու, որով նրանք շատ անգամ կազմում են սրտառուչ եղբայրական ընկերութիւններ: Նայեցէք մեր թուզունների վերայ ձմեռուայ ամիսներում, երբ երկինքը մթնած է, և երկիրը ծածկուած է լինում ձիւնով. աեսէք թէ ինչպէս նրանք սեղմուելով իրարու կողքին ծայրում՝ խաղաղութեամբ, փոխադարձ տաքացնում են միմեանց: Կարիքն է որ միացնում է նրանց: Բայց երբ տաքանում են օրերը, առատ է ամեն կողմ ուտելիքը, այն ժամանակ նրանք ճճւում, կուում, միմեանց հալածում ու վիրաւորում են: Հէնց այսպէս է և մարդը: Տխրութեան օրերում նա յինում է մեղմ և քաղցրաբարոյ իւր

ընկերների նկատմամբ, իսկ երբ հարուստ է ամեն տեսակ բարիքներով, նա յաճախ մոռացկոտ ու խստասիրտ է լինում: Համեստ ու միջակ կարողութիւնը առաւել նպաստում է անհրաժեշտ առաքիւնութիւններ ու բարձր բարոյականութիւն ձեռք բերելու:

Երբ որ մարդս հեռու է լինում փոթորկալի ու խաբուսիկ վայելքներից ու դուարձութիւններից, ահա այն ժամանակ միայն նա կարող է լաւ կշռադատել կեանքը:

Նա կառնէ նիւթից միայն այն, ինչ որ անհրաժեշտ է իւր զգայարանքների պահպանութեան համար, իսկ կորստաբեր սովորութիւններից նա կը խորշէ և գերի կը դառնայ բազմաթիւ արհեստական ու աշխարհային կարիքների, մարդկային այդ բռնակալին: Նա այն ժամանակ կը լինի զգաստ և աշխարհասէր, քչով բաւականացող և ամենից առաւել իր անձը կը նուիրէ համեստ ու խելացի բաւակահարութիւնների և սրտի ուրախութեան: Այս կերպով մարդս զինուելով նիւթի գրոհ տալու դէմ, նա իւր բանականութեան մաքուր լուսովը կը տեսնէ իւր փայլուն ճակատագիրը: Նա կեանքի նպատակը և իրերի պատճառները հասկանալով՝ տիրութեան առաջ հաստատուն կանգնած կը մնայ և կ'ստիպէ նրան իւր կատարելագործման և հոգու մաքրութեանը ծառայել: Նա քաջութեամբ կը դիմաւորէ չարչարանքներին, խորապէս համոզուած լինելով որ այդ չարչարանքը փրկարար է, որ նա այն հարուածն է, որ մեր հոգին պայթեցնում է, և հէնց միայն այդ պայթումի շնորհիւն է, որ նրանից կարող է բոլորը դուրս թափուել. այսինքն այն ամեն չարութիւնն ու ատելութիւնը, որ մեր մէջն է գտնուում: Եթէ մարդիկ նրա վրայ ծիծաղում են, և եթէ նա անիրաւութիւնների ու շահագրգռումների դոհ է դարձած, նա այդ ամենը ոչինչ համարելով, կը սովորի համբերութեամբ տանել կեանքի ձախորդութիւններն ու արհաւիրքները, այն ժամանակ նա կը մխիթարուի հոգով, որ Քրիստոս էլ մարդկութեան համար չարչարուեց ու մեռաւ: Եւ վերջապէս երբ կեանքը անց է կացրած սրբութեամբ, և հասել է վերջին հանգիստաւոր ընդուն,--նա հանգիստ ու անդորր սրտով, առանց արիւստաւոր կ'ընդունի մահը, իբրեւ այս աշ-

խարհի ներկայացուցչի, որը ճիշտ ու լուրջ մտածողի համար ոչ այլ ինչ է, բայց եթէ ազատութեան ու նորոգման ժամը և արքայութեան դուռը, որ բացուած է լուսաւոր հողին հրէի առաջ: Նա այս շէմքից անցնում է հանգիստ սըրտով և սլանում դէպի վերին գաւառները: Նրա խիղճը ազատուելով նւթական կապանքներից, կը կանգնի նրա առաջ իբրև դատաւոր, իբրև Աստուծոյ ներկայացուցիչ, հարցնելով նրան՝ «Ի՞նչ ես արել կեանքումդ».— և նա կը պատասխանէ՝— Ես կուեցի, չարչարուեցայ, սիրեցի. ես սովորեցի բարին, ճշմարտութիւնն ու արդարադատութիւնը: Ես անկեղծութեան ու հեղութեան մէջ օրինակ եղայ ուրիշներին. ես չարչարողների վիճակը թեթևացրի, լացողներին էլ մխիթարեցի: Իսկ երբ աստուած ինձ է կանչում, ահա ես այժմ ներկայանում եմ:

Արդ, ով մարդ, հաւատա քո վեհ ճակատագրին: Դու ծնուած ես դօրեղ, բայց ոչ մշակուած ընդունակութիւններով, անվերջ ձգտումներով. և յաւիտենականութիւնը քեզ տրուած է նրա համար, որ դու քո ընդունակութիւնները զարգացնես ու նրանց բաւարարութիւն տաս: Դժուար ու ծանր ժամանակներ մէջ ապրելով մեծանալը, գիտութիւններով զարգանալը, տխրութիւններով ու վշտերով մաքրուելը, առաւել լայն չափով գիտութիւններ, ևս առաւել, ազնիւ յատկութիւններ ձեռք բերելը— ահա այս է քո կոչումը: Աստուած քեզ համար աւելի շատ բան է արել: Նա քեզ տուել է միջոցներ՝ իւր ընդարձակ գործի ու անվախճան կատարելագործութեան մէջ մասնակցելու:

Նոր ճանապարհներ բռնալը քո սակաւ զարգացած եղբայրների համար, նրանց դաստիարակելն ու նրանց քո բարձրութեանը հասցնելը, ճշմարտի ու ամենագեղեցիկ շքեղութեան ու տիեզերքի մեծավայելուչ ներդաշնակութեան գիտակից անելը— այս ամենը հոգիներ ու աշխարհներ ստեղծել ու կերպարանափոխել չէ՞ արդեօք. մի՞թէ այս հսկայական աշխատանքը, որ լի է բաւականութիւններով և ուրախութիւններով, նախապատուելի չէ՞ քան ապարդիւն անգործունէութիւնը: Կայ արդեօք մի որեւէ բան առաւել

մեծ և արժանաւոր քո անմահ հոգու համար, քան ամեն տեղ բարիք և արդարադատութիւն գործելը:

Բարձրացրու քո հայեացքը և ընդգրկիր քո անվախճան ապագայի ընդարձակ հեռանկարը: Եւ այդ տեսնելով դու կարող ես առնել նրանից անհրաժեշտ ոյժ՝ կեանքի հողմերի ու փոթորիկների հետ կուեցու: Գնա, դու բարի մրցող, և բարձրացիր ու հասիր այն կատարելութիւններին, որոնք կուեցում են առաքինութիւն, պարտք և զոհ: Ճանապարհին մի կանգնիր, որ հաւաքես գոյնգոյն ծաղիկներ և խաղաս սակեգոյն քարերով:

Ուրեմն յառանջ, դէպի յառանջ:

Դու տեսնում ես այն հեռաւոր երկնքում վառուող աստղերն ու անթիւ արեգակները: Որքան դարեր հարկաւոր էին նրանց ձեւակերպելու համար: Եւ որքան դարեր էլ հարկաւոր են նրանց կործանման համար: Այսպէս ուրեմն՝ իմացիր, որ կը գայ ժամանակ, երբ այդ բոլոր լուսատուները պիտի մարեն, երբ այդ վիթխարի աշխարհները պիտի անյայտանան, որպէսզի միւս մոլորակային խմբերին տեղ տան: Եւ ինչ որ այժմ դու տեսնում ես, դրանցից և ոչ մինը մնալու չէ:

Տարածութեան մէջ եղած քամին, այդ մաշուած ու քայքայուած աշխարհների փոշին ընդմիջտ պիտի աւլէ ու ցրուէ, բայց դու միշտ պիտի սպասես անընդհատ վերակենդանացող արարածների ծոցում, քո յաւիտենական ճանապարհը հաստատապէս շարունակելով: Ի՞նչ կը լինին այն ժամանակ քո մաքրուող ու բարձրացող հոգու համար ներկայի հոգսերը: Մեր ճանապարհի վերայ պատահած աւօրեայ արկածները մեր մտքի խորքում կը թողնեն միայն թոյլ տխուր և քաղցր յիշողութիւններ: Անմահութեան անվախճան հորիզոնի առաջ. ներկայի թշուառութիւններն ու փորձութիւնները պայծառ երկնքի վրայով անցնող ամպերի կը նմանեն:

Չափիր ուրեմն ճշմարտութեամբ կեանքի շահերն ու օգուտները: Դու ամենևին նրանց չպիտի արհամարհես, որովհետեւ նրանք հարկաւոր են քո յառաջադիմութեան համար, և քո միասխան քո սեպհական կատարելագործութեամբ

նրանց կատարելագործման նպաստելն է. բայց դու կեանքի
շահագրգռումներին բոլորովին անձնատուր մի լինիր, այլ
ընդհակառակն՝ որոնիր նրանց մէջ ամենից առաջ քեզ օգ-
տակար խրատները: Եւ դրանց շնորհիւ դու կը հասկանաս,
որ կեանքի նպատակը վայելքների ու աշխարհային բախ-
տաւորութեան մէջ չէ, այլ աշխատանքի, ուսման, պարտքի
կատարման մէջ, որոնց օգնութեամբ մարդս դառնում է
բանական, բարոյապէս կատարելագործուած էակ:



ՄԻ Գաղափարական գրադարան



MAL009228

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Գրքի պահպանող գրանցում է թարգմանչի մօտ
Нахичевань на Дону, 25-ая линия, домъ № 29
Свящ. Н. Боснакіанцъ.